ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.07.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ԱՄ-2018/91

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.06.2018թ. թիվ 03/26-3/11161-18 գրությամբ «Մանսան Մոտորս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Վայոց Ձորի մարզպետարանի 18.06.2018թ. թիվ 02/03.1/4245-18 և 19.06.2018թ. թիվ 02/03.1/4294-1 գրությունների հիման վրա, 20.06.2018թ. թիվ 03/26-3/11161-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «Մանսան Մոտորս» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Մանսան Մոտորս» ՍՊԸ -ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Մանսան Մոտորս» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ որևէ դիրքորոշում չի ներկայացրել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/91 ընթացակարգի շրջանակներում 25.06.2018թ. ժամը 10:35-ին և 29.06.2018թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>ՀՀ Վայոց Ձորի մարզպետարանի փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ Վայոց Ձորի մարզպետարանը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 18.06.2018թ. թիվ 02/03.1/4245-18 և 19.06.2018թ. թիվ 02/03.1/4294-1 գրություններով հայտնել է, որ ՀՀ Վայոց Ձորի մարզպետարանի կարիքների համար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՎՁՄ-ԳՀԾՁԲ-16/18» ծածկագրով ընթացակարգի հաղթող ճանաչված «Մանսան Մոտորս» ՍՊԸ-ն 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրել ներկայացված պայմանագրի նախագիծը և չի ներկայացրել պայմանագրի ապահովումը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/91 ընթացակարգի շրջանակներում 25.06.2018թ. ժամը 10:35-ին և 29.06.2018թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցիչների մասնակցությունը:

<u>4. ՍՑ-ԱՄ-2018/91 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ԱՄ-2018/91 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.ՀՀ Վայոց Ձորի մարզպետարանի կողմից ՀՀ Վայոց Ձորի մարզպետարանի կարիքների համար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՎՁՄ-ԳՀԾՁԲ-16/18»

ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մանսան Մոտորս» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 11.05.2018թ. նիստի թիվ 19/2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Մանսան Մոտորս» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից և որոշվել է Ընկերությանը ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

3. Պատվիրատուն 17.05.2018թ. էլեկտրոնային եղանակով ծանուցել է «Մանսան Մոտորս» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.06.2018թ. նիստի թիվ 19/3 արձանագրության 1-ին կետով արձանագրվել է, որ «Մանսան Մոտորս» ՍՊԸ-ն զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից, քանի որ Ընկերությունը պայմանագիրը կնքելու ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրել պայմանագիրը և չի ներկայացրել պայմանագրի ապահովումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 20.06.2018թ. թիվ 03/26-3/11161-18 գրությունը, ՀՀ Վայոց Ձորի մարզպետարանի 18.06.2018թ. թիվ 02/03.1/4245-18 և 19.06.2018թ. թիվ 02/03.1/4294-1 գրությունները և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

4. Մինչև սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետի ավարտը կողմերի համաձայնությամբ կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ՝ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 13-րդ և 14-րդ ենթակետերի համաձայն՝

13) ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը.

14) ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

ՀՀ Վայոց Ձորի մարզպետարանի կողմից ՀՀ Վայոց Ձորի մարզպետարանի կարիքների համար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՎՁՄ-ԳՀԾՁԲ-16/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մանսան Մոտորս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 11.05.2018թ. նիստի թիվ 19/2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Մանսան Մոտորս» ՍՊԸ-ն ճանաչվել է

ընտրված մասնակից և որոշվել է Ընկերությանը ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Պատվիրատուն 17.05.2018թ. էլեկտրոնային եղանակով ծանուցել է «Մանսան Մոտորս» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.06.2018թ. նիստի թիվ 19/3 արձանագրության 1-ին կետով արձանագրվել է, որ «Մանսան Մոտորս» ՍՊԸ-ն զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից, քանի որ Ընկերությունը պայմանագիրը կնքելու ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրել պայմանագիրը և չի ներկայացրել պայմանագրի ապահովումը:

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***<u>եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում,</u>*** չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

«ՎՁՄ-ԳՀԾՁԲ-16/18» ծածկագրով պայմանագրի նախագիծը Ընկերությանն ուղարկվել է ***<u>17.05.2018թ.:</u>***

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

Տվյալ դեպքում պայմանագիրը ստորագրելու և պայմանագրի ապահովում ներկայացնելու վերջնաժամկետը տասն աշխատանքային օրվա պայմաններում լրանում է ***<u>01.06.2018թ. ներառյալ:</u>***

Այսպիսով՝ Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում, իսկ 36-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝

10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Մանսան Մոտորս» ՍՊԸ-ն թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, քանի որ Ընկերությունը որպես ընտրված մասնակից սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացրել պայմանագրի ապահովումը, դրանով իսկ հրաժարվելով «ՎՁՄ-ԳՀԾՁԲ-16/18» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելուց:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.06.2018թ. թիվ 03/26-3/11161-18 գրությամբ «Մանսան Մոտորս» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 08909411) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Մանսան Մոտորս» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**